Հաստատված է
Տնօրինության 19.02.2026-ի նիստի
թիվ DEC 12-16 արձանագրությամբ:
Ուժի մեջ է մտնում 20.02.2026թ.-ից

ԲԻԶՆԵՍ ՎԱՐԿԱՅԻՆ ԳԾԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ						
Վարկային գծի նպատակ	Ձեռնարկատիրական գործունեության զարգացում					
Վարկային գծի տեսակ	Վերականգնվող կամ չվերականգնվող վարկային գիծ					
Վարկային գծի արժույթ	ՀՀ դրամ			ԱՄՆ դոլար		
Վարկային գծի ժամկետ	12-60 ամիս	12-36 ամիս	37-60 ամիս	12-60 ամիս	12-36 ամիս	37-60 ամիս
Ապահովվածության տեսակ	Երաշխավորություն	Գույք	Գույք	Երաշխավորություն	Գույք	Գույք
Վարկային գծի տարեկան անվանական տոկոսադրույք*	17%	14%	15 %	14%	9.5 %	10.5%
Վարկային գծի տարեկան փաստացի տոկոսադրույք	14.94-23.35%			9.93-18.15%		
Վարկային գծի գումար	2 000 000 – 2 միլիարդ ՀՀ դրամ			5 000-5 000 000 ԱՄՆ դոլար		
Վարկային գիծը կարող է տրամադրվել քարտի միջոցով, ոչ ավել քան՝ 15 000 000 ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթի չափով, որի ժամկետը չի կարող գերազանցել քարտի գործողության վերջնաժամկետը:						
Վարկային գծի տոկոսների մարում	Ամենամսյա					
Վարկային գծի մայր գումարի մարում	Կախված բիզնեսի առանձնահատկությունից					

TC 03-26#1

Հաստատված է
Տնօրինության 19.02.2026-ի նիստի
թիվ DEC 12-16 արձանագրությամբ:
Ուժի մեջ է մտնում 20.02.2026թ.-ից

Վարկային գծի չօգտագործված մասի նկատմամբ հաշվարկվող տարեկան տոկոսադրույք	0.5%	
Քարտային վարկային գծի չօգտագործված մասի նկատմամբ հաշվարկվող տարեկան տոկոսադրույք	0%	
Վարկային գծի տրամադրման, սպասարկման միանվագ վճար	Չի սահմանվում	
Վարկ/Գրավ առավելագույն արժեք	Համաձայն հավելված 1-ի:	
Ապահովման միջոց	• Անշարժ գույք և/կամ տրանսպորտային միջոց*, • Երաշխավորություն/ներ • Վարկային կոմիտեի որոշմամբ կարող են նախատեսվել նաև այլ ապահովման միջոցներ, այդ թվում՝ գյուղտեխնիկա:	• Անշարժ գույք և/կամ տրանսպորտային միջոց* • Երաշխավորություն/ներ • Վարկային կոմիտեի որոշմամբ կարող են նախատեսվել նաև այլ ապահովման միջոցներ, այդ թվում՝ գյուղտեխնիկա:
Ավտոմեքենա**	Ավտոտրանսպորտային միջոց, որի արտադրման տարեթիվը գրավադրման պահին չպետք է լինի ավելի հին, քան՝ • ռուսական արտադրության ավտոմեքենաների համար՝ 5 տարի, • այլ երկրների արտարդրության ավտոմեքենաների համար՝ 10 տարի:	
Բիզնես քարտի պայմաններ և սակագներ	Համաձայն Բանկում գործող սակագների	

Հաստատված է
Տնօրինության 19.02.2026-ի նիստի
թիվ DEC 12-16 արձանագրությամբ:
Ուժի մեջ է մտնում 20.02.2026թ.-ից

Ավտոմեքենան ենթակա է պարտադիր «Կասկո» (ֆիզիկական վնաս և առևանգում) ապահովագրության հոգուտ ~~Կազմակերպության~~ Բանկին՝ առնվազն վարկի գումարի չափով և վարկի գործողության ամբողջ ընթացքում յուրաքանչյուր տարի ապահովագրական պայմանագրի վերակնքման պայմանով:	
Գրավի գնահատում	**Գրավը ենթակա է գնահատման «Ֆաստ Բանկ» ՓԲԸ-ի հետ համագործակցող գույքի գնահատում իրականացնող անկախ գործակալության և/կամ Բանկի աշխատակցի կողմից՝ կախված վարկի գումարի չափից: Բանկի աշխատակցի կողմից գնահատումն իրականացվում է անվճար:**
Ժամկետանց մայր գումարի տույժ (օրական)	**0.1% օրական**
Ժամկետանց տոկոսի տույժ (օրական)	**0.13% օրական**
Վարկային գծի *վաղաժամկետ մարում* ***	**Չվերականգնվող Վարկային գծի ժամկետի առաջին 3 տարվա ընթացքում վարկային գծի լրիվ փակման կամ վարկային գծի սահմանաչափի մասնակի վաղաժամկետ նվազեցման դեպքում վճարվում է տույժ ժամկետից շուտ վճարած գումարի 3%-ը, սակայն միանվագ կամ հանրագումարային պայմանագրային գումարի մինչև 20%-ի չափով վաղաժամկետ սահմանաչափի նվազեցման դեպքում տույժ չի կիրառվում:**
****** Կիրառելի է 100 000 000-ից կամ համարժեք արտարժույթից ավելի պայմանագրային գումարով վարկային գծերի դեպքում***	
Երաշխավորություն (առկայության դեպքում)	**• Առնվազն 1 ֆիզիկական անձի (18-65 տարեկան) կամ ԱՁ-ների երաշխավորություն, ով չունի գործող ժամկետանց պարտավորություն(ներ)** **• Երաշխավորներից յուրաքանչյուրի վերջին մեկ տարում ունեցած ժամկետանց պարտավորությունների օրերի հանրագումարը չպետք է գերազանցի 30 օրը:** **• Երաշխավորներից առնվազն մեկը պետք է հանդիսանա անշարժ գույքի սեփականատեր կամ լինի գրանցված աշխատակից:** **Մինչև 10 000 000 կամ 25 000 ԱՄՆ դոլար արժողությամբ վարկերը կարող են տրամադրվել առանց գրավի՝ միայն վերոնշյալ պայմաններին բավարարող երկու երաշխավորություններով:**
Վարկառու	**ՀՀ ռեզիդենտ իրավաբանական անձ, անհատ ձեռնարկատեր**

***Վարկային կազմակերպություններին վարկավորելու պարագայում տոկոսադրույքները սահմանել 0.5%-ով ցածր:**

Հաստատված է
Տնօրինության 19.02.2026-ի նիստի
թիվ DEC 12-16 արձանագրությամբ:
Ուժի մեջ է մտնում 20.02.2026թ.-ից

Ծանոթություն

1. Երրորդ անձանց կողմից մատուցվող ծառայությունները և դրանց վճարներն են.

1.1. Անշարժ գույքի՝ այդ թվում՝ հողամասի, գրավադրման դեպքում.

1) Անշարժ գույքի սահմանափակումների վերաբերյալ տեղեկանք՝ 10 000 ՀՀ դրամ,
2) Գրավի պետական գրանցման վճար՝ 26 000 ՀՀ դրամ,
3) Նոտարական վավերացման վճար՝ 16 000-20 000 ՀՀ դրամ:
4) Գույքի գնահատման վճար՝ 15 000-25 000 ՀՀ դրամ:

1.2. Ավտոմեքենայի գրավադրման դեպքում.

1) Ավտոտրանսպորտային միջոցի սահմանափակումների մասին տեղեկանք՝ 3 000-4 000 ՀՀ դրամ,
2) Գրավի պետական գրանցման վճար՝ 2 000-3 000 ՀՀ դրամ,
3) Գրավի ապահովագրություն՝ վարկի գումարի 2.5%-ի չափով,
4) Նոտարական վավերացման վճար՝ 11 000-12 000 ՀՀ դրամ
5) Գույքի գնահատման վճար՝ սկսած 5 000-20 000 ՀՀ դրամ:

2. Անկախ սույն պայմաններում նշված 3-րդ անձանց վճարների դրույքաչափերից, վերջիններիս կողմից մատուցվող ծառայությունների դիմաց վճարները կարող են փոփոխվել:

3. Վարկային գծի օգտագործված մասի տոկոսները հաշվարկվում են վարկային գծի մնացորդի նկատմամբ, իսկ վարկային գծի չօգտագործված մասի տոկոսները հաշվարկվում են վարկային գծի չօգտագործված մասի նկատմամբ՝ ելնելով տարում 365 օրվա հաշվարկից:

4. Վարկային գիծը տրամադրվում է անկանխիկ եղանակով՝ փոխանցելով Բանկում բացված հաճախորդի բանկային հաշվին:

5. Անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, ինչպես նաև Բանկի հետ համագործակցող ապահովագրական ընկերությունների և անկախ գնահատողների ցանկը սահմանվում են առանձին՝ «Անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ» և «Բանկի հետ համագործակցող անկախ գնահատող ընկերությունների ցանկ» փաստաթղթերով:

6. Վարկային գիծը տրամադրվում է Բանկի Գլխամասային գրասենյակում, «Հին Նորք», «Շրջանային», «Ավան», «Դավթաշեն», «Մովսես Խորենացի», «Սեբաստիա», «Կոմիտաս», «Բաղրամյան» , «Թումանյան», «Էրեբունի», «Հարավ-Արևմտյան», «Շենգավիթ», «Ալեք Մանուկյան», «Տիգրան Մեծ», «Արմավիր», «Արտաշատ», «Մասիս», «Գորիս», «Գյումրի», «Վանաձոր», «Աբովյան», «Հրազդան», «Էջմիածին», «Մարտունի», «Սևան», «Գավառ», «Անի», «Աշտարակ», «Իջևան», «Վեդի», «Արթիկ», «Եղեգնաձոր», «Կապան», «Չարենցավան», «Ալավերդի», «Քաջարան», «Նոր Նորք» մասնաճյուղերում:

7. Վարկային գիծը տրամադրման դրական որոշման կայացման գործոններն են.

7.1. Վարկառուի և Գրավի համապատասխանությունը սույն փաստաթղթով սահմանված պահանջներին:

7.2. Վարկառուն հայտի ներկայացման օրվա դրությամբ չպետք է ունենա ժամկետանց պարտավորություններ և դիմելու պահին նախորդող 12 ամիսների ընթացքում ժամկետանց պարտավորությունների հանրագումարը չպետք է գերազանցի 30 օրը:

Հաստատված է
Տնօրինության 19.02.2026-ի նիստի
թիվ DEC 12-16 արձանագրությամբ:
Ուժի մեջ է մտնում 20.02.2026թ.-ից

8. Վարկային գծի մերժման գործոններն են հանդիսանում Վարկառուի և/կամ Գրավի անհամապատասխանությունը սույն փաստաթղթով սահմանված պահանջներին:

9. Վարկային հայտի վերաբերյալ որոշման կայացումը և Վարկառուին տեղեկացումը կատարվում է պահանջվող փաստաթղթերը ներկայացնելուց հետո մինչև 5 աշխատանքային օրվա ընթացքում:

10. Վարկային գծի տրամադրում՝ պահանջվող բոլոր փաստաթղթերը ներկայացնելուց հետո մինչև 2 աշխատանքային օրվա ընթացքում:

11. Վարկային գծի մարման նպատակով մուտքագրված ցանկացած գումար, որպես կանոն, Բանկի կողմից ուղղվում է մուտքագրման պահին առկա՝ Հաճախորդի կողմից Բանկի Վարկային պայմանագրով վճարման ենթակա գումարների, այդ թվում՝ տույժերի, սպասարկման վճարների, տոկոսների, Վարկային գծի գումարի մարմանը: Բանկն իրավունք ունի Հաճախորդի հետ կնքվող պայմանագրում վճարման ենթակա գումարների համար այլ հերթականություն սահմանել:

12. Արտարժույթով տրամադրվող վարկերի գծով՝ արտարժույթի փոխարժեքի փոփոխությունները կարող են ազդեցություն ունենալ վարկի մարումների վրա:

13. Արտարժույթով տրամադրված Վարկային գծերի տոկոսագումարների (առկայության դեպքում նաև սպասարկման վճարը, տույժերը, տուգանքները) գանձման, ինչպես նաև տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկի համար հիմք է հանդիսանում ՀՀ ԿԲ կողմից սահմանված տվյալ օրվա հաշվարկային փոխարժեքը:

14. Ոչ ֆինանսական ծառայությունների սակագները, այդ թվում՝ քաղվածքների, պայմանագրերի կրկնօրինակների և այլ տեղեկությունների տրամադրման պայմանները հրապարակված են Բանկի պաշտոնական կայքէջում՝ https://www.fastbank.am, ինչպես նաև տեղադրված են Բանկի մասնաճյուղերում:

15. ՀԱՃԱԽՈՐԴԻ ԿՈՂՄԻՑ ՎԱՐԿԱՅԻՆ ԳԾԻ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ՄԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՀԱՄԱՄԱՍՆՈՐԵՆ ՆՎԱԶԵՑՎՈՒՄ ԵՆ ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ, ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՆԱԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԸ, ԵԹԵ ՎԵՐՋԻՆՍ ՀԱՇՎԵԳՐՎՈՒՄ Է ՕՐԱԿԱՆ ԿՏՐՎԱԾՔՈՎ, ԻՍԿ 3-ՐԴ ԱՆՁԱՆՑ ԿԱՏԱՐՎԱԾ ՎՃԱՐՆԵՐԸ ԵՆԹԱԿԱ ՉԵՆ ՆՎԱԶԵՑՄԱՆ:

16. ԶԳՈՒՇԱՑՈՒՄ՝ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ, ՎԱՐԿԱՅԻՆ ԳԾԻ ԳՈՒՄԱՐԸ, ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԳՐԱՎԱԴՐՎԱԾ ԳՈՒՅՔԸ ԿԱՐՈՂ Է ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԲՌՆԱԳԱՆՁՎԵԼ:

17. ԱՅՆ ԴԵՊՔՈՒՄ, ԵՐԲ ԳՐԱՎ ԴՐՎԱԾ ԳՈՒՅՔԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՍՏԱՑՎՈՂ ԳՈՒՄԱՐԸ ՊԱԿԱՍ Է ԳՐԱՎՈՎ ԱՊԱՀՈՎՎԱԾ ՊԱՀԱՆՋԻ ԵՎ ԳՐԱՎ ԴՐՎԱԾ ԳՈՒՅՔԻ ԻՐԱՑՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐԻՑ, ԱՊԱ ՎԱՐԿԱՏՈՒՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ՊԱԿԱՍ ԳՈՒՄԱՐԸ ՍՏԱՆԱԼՈՒ ՎԱՐԿԱՌՈՒԻ ԱՅԼ ԳՈՒՅՔԻՑ:

18. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ԲԱՆԿԸ ՄԻՆՉ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ ՁԵՋ ԵՎ ՁԵՐ ԵՐԱՇԽԱՎՈՐ(ՆԵՐ)ԻՆ ԿՏՐԱՄԱԴՐԻ ՎԱՐԿԱՅԻՆ ԳԾԻ ԷԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ, ՈՐՈՒՄ ԿՆԵՐԿԱՅԱՑՎԵՆ ՁԵՋ ՏՐԱՄԱԴՐՎԵԼԻՔ ՎԱՐԿԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ:

19. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՁԵՐ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՄ ԹԵՐԻ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԲԱՆԿԸ 3 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՅԴ ՏՎՅԱԼՆԵՐՆ ՈՒՂԱՐԿՈՒՄ Է ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ, ՈՐՏԵՂ ՁԵՎԱՎՈՐՎՈՒՄ Է ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ: ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻՑ ՏԱՐԵԿԱՆ ՄԵԿ ԱՆԳԱՄ ԱՆՎՃԱՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼ ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ: ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՏ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐՈՂ Է ԽՈՉԸՆԴՈՏԵԼ ՁԵՋ՝ ԱՊԱԳԱՅՈՒՄ ՎԱՐԿ ՍՏԱՆԱԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ:

20. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՐԿԱՅԻՆ ԳԾԻ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ, ԻՍԿ ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ ՑՈՒՅՑ Է ՏԱԼԻՍ, ԹԵ ՈՐՔԱՆ ԿԱՐԺԵՆԱ ՎԱՐԿԸ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ԵՎ ԱՅԼ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԸ ՍԱՀՄԱՆՎԱԾ

Հաստատված է
Տնօրինության 19.02.2026-ի նիստի
թիվ DEC 12-16 արձանագրությամբ:
Ուժի մեջ է մտնում 20.02.2026թ.-ից

ԺԱՄԿԵՏՈՒՄ ԵՎ ՉԱՓԵՐՈՎ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ: ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ՏԵՂԱԴՐՎԱԾ Է ԲԱՆԿԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՅՔԷՋՈՒՄ (**www.fastbank.am**):

21. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՀԱՂՈՐԴԱԿՑՎԵԼ ԲԱՆԿԻ ՀԵՏ ՁԵՐ ՆԱԽԸՆՏՐԱԾ ԵՂԱՆԱԿՈՎ, ՈՐՈՆՑ ԿԱՐՈՂ ԵՔ ԾԱՆՈԹԱՆԱԼ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՅՔԷՋՈՒՄ՝ https://www.fastbank.am: ԲԱՆԿԸ ՊԱՐՏԱՎՈՐՎՈՒՄ Է ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՊԵՐԲԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՄԲ, ՈՐԸ ՉՊԵՏՔ Է ԳԵՐԱԶԱՆՑԻ ՄԵԿ ԱՄԻՍԸ, ՎԱՐԿԱՌՈՒԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼ ՊԱՅՄԱՆԱԳՐԻՑ ԲԽՈՂ ՍՊԱՌՈՂԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՄԱՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՎՈՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՈՎ:

22. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ԲԱՆԿԸ ՊԱՐՏԱԴԻՐ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՁԵՋ ԿՏՐԱՄԱԴՐԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՈՎ: ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՈՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՍՏԱՑՈՒՄԸ ԱՄԵՆԱՀԱՐՄԱՐԱՎԵՏՆ Է, ԱՅՆ ՀԱՍԱՆԵԼԻ Է 24/7 ՌԵԺԻՄՈՎ, ՁԵՐԾ Է ԹՂԹԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԿՈՐՍՏԻ ՌԻՍԿԵՐԻՑ ԵՎ ԱՊԱՀՈՎՈՒՄ Է ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ: ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՀՐԱԺԱՐՎԵԼ ԲԱՆԿԻ ՀԵՏ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՈՎ ՀԱՂՈՐԴԱԿՑՎԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻՑ՝ ՊԱՐՏԱԴԻՐ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՄ ԿԱՊԻ ԱՅԼ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ՍՏԱՆԱԼՈՒ ՊԱՅՄԱՆՈՎ:

23. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՁԵՐ «ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՆ» ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՆՄԱՆ, ՀԱՄԵՄԱՏՄԱՆ ԵՎ ՁԵՋ ՀԱՄԱՐ ԱՄԵՆԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՏԱՐԲԵՐԱԿԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՇՏԱՑՆՈՂ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ Է:

24. ԲԱՆԿԸ ՎԵՐԱՀՍԿՎՈՒՄ Է ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ:

25. ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՐԿԱՌՈՒԻ ԿՈՂՄԻՑ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԲԱՆԿՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ԵՐԱՇԽԱՎՈՐԻՑ ՊԱՀԱՆՋԵԼ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՎԱՏԱՆԱԼՈՒ Է ԵՐԱՇԽԱՎՈՐԻ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐ Է ԶՐԿՎԻ ԻՐ ՍԵՓԱԿԱՆ ԳՈՒՅՔԻՑ: